# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին

17 դեկտեմբերի 2024թ.
ժամը 16:00-ին

2024 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական շենքում կայացավ Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգի նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սիրանուշ Գևորգյանը: Ողջունելով ներկաներին՝ Սիրանուշ Գևորգյանը նշեց, որ Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգի նախագիծը կազմելիս հիմք է ընդունվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 1-ին մասը, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածները, 16-րդ հոդվածի 1-ին մասը, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածը և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ ու 19-րդ կետերը:

**Մ. Մկրտչյան** - Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց, որ Ոսկեհատ բնակավայրում մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամի փոխարե սահմանվում է 30 000 /երեսուն հազար / դրամ: Ոսկեհատ բնակավայրում մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ՝

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 15000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 2 գործակցի կիրառմամբ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 15000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 2 գործակցի կիրառմամբ:

**Լ. Քալաշյան** – Համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետը մանրամասն ներկայացրեց, որ որոշման նախագծով սահմանվել են Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը: Վաղարշապատ համայնքում տեղական վճարների տեսակները սահմանված են, ըստ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով: Նախագծում, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի մեջ մտնող բնակավայրերի առանձնահատկությունները, կիրառվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դրույթները:

**Ռ. Մարտիրոսյան** - Համայնքապետարանի Քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի պետը ներկայացրեց Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման եւ շահագործման թույլտվության օրացուցային տարվա ընթացքում համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ներկայացվող պահանջներն ու պայմանները:

**Կ Սմբատյան** - Համայնքապետարանի Եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի պետը ներկայացրեց Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության, համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից

ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար ներկայացվող պահանջներն ու պայմանները:

Դիտողություններ և առաջարկություններ

<u>Չկան</u>

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

- Հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Վարող – Ս. Գևորգյան

Արձանագրող – Ս. Գևորգյան

Քննարկումների պատասխանատու Կ. Եսայան

Հանրային քննարկման կազմակերպող Վաղարշապատի համայնքապետարան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով:

ՑԱՆԿ

Վաղարշապատ համայնքի տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը եւ արտոնությունները սահմանելու վերաբերյալ հանրային քննարկման

| | Անուն ազգանուն | Հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1. | Ռաֆայել Զիրոյան | 094 51 28 28 | rafayel.ziroyan.92@mail.ru | [signature] |
| 2. | Արմենակ Մանուկյան | 033141101 | manukyan.armen1997@mail.com | [signature] |
| 3. | Ռայա Ոսկանյան | 074177441 | raya.voskanyann@gmail.com | [signature] |
| 4. | Գ. Կասպարյան Կարինե | 034174545 | nkarinyan@mail.ru | [signature] |
| 5. | Ջավահիր Ղարզանյան | 077570736 | gharzanyanhasmik58@gmail.com | [signature] |
| 6. | Սոնա Առաջանյան | 094276776 | arajanyan.sona84@mail.ru | [signature] |
| 7. | Վոստան Մարտիրոսյան | 041107100 | vostanmartirosyan@mail.ru | [signature] |
| 8. | Լուսինե Զազյան | 077-89-89-47 | zazyaax@mail.ru | [signature] |
| 9. | Օհանյան Արմինե | 041500049 | ohanyan.armine.83@mail.ru | [signature] |
| 10. | Մղդեսյան Մարի | 098674687 | mari.mghdesyan@mail.ru | [signature] |
| 11. | Միք. Խաչատրյան Շողիկ | 093238932 | shterkol@mail.ru | [signature] |
| 12. | Մարգարյան Մարիամ | 093933862 | marzamik19@mail.ru | [signature] |
| 13. | | | | |
| 14. | | | | |
| 15. | | | | |
| 16. | | | | |
| 17. | | | | |
| 18. | | | | |
| 19. | | | | |